



123. ԷՐԿՈՒ ՔՈՒՐ

Կէղնին-չէղնին էրկու քուր կէղնին: Մեծի աչք դուս կէղնի՝ ծուռ
նամպով կը քելի, պզտիկ քուր լի գուղե ընդրա պես ուրին սիրող մը
րոնե: Մեծ քուր կըսե.

— Ես էրեր իմ, դու մ'էնի, տակեն չըս կոնա դուս դա, կէղնիս
խայտառակ:

Քուր անկաջ շէնե, սիրող մ' ուրին կը րոնե, քիրկուն մե մարդ
ջաղաջ կէրթա, կնիկ ղսիրող ներս կառնե, զդուռ կը փակե վըր
ուրանց: Մարդ կէրթա, լի վըր կրնկին ետ կը դառնա, դոր շէղնի:

Թը՛խ, թը՛խ, թը՛խ:

— Կնի՛կ, դուռ բաց:

Կնիկ ներսեանց կը ճչա.

— Վո՛ւյ, սև կապիմ, իմ մարդն էկեր է, ի՛մալ էնիմ, իմ քուրն
ըսեց, ես չավտըցա:

Թը՛խ, թը՛խ, թը՛խ:

— Կնի՛կ, դուռ բաց:

— Վո՛ւյ, իմ քուրն ըսեց, ես չավտըցա:

Մարդն ըսեց.

— Չէղնի՛ կնիկ զուր խելք թռուցեր է:

Կէրթա քենոջ տուն:

— Քո՛ւրիկ, — կըսե, — քու քուր զդուռ փակեր է՝ կէնիմ-չէնիմ
զդուռ չը բանա, բան օր կըսե. «Իմ քուրն ըսեց, ես չավտըցա». ի՛նչ
իս ըսի, որ չավտըցեր է քըզի:

— Մեռնիմ քրդի ջանախպեր, դէրեխեն առ գիրկդի, շընկնու
թունդիր, հարի հասնիմ, տեսնամ ի՞նչ է էդի:

Քուր կէրթա զգուռ կիտա բանալ, զսիրող կը փախցու, մն սալ
պուտուկ մածուն կիտա չըլնալ մրջ ձձմին, քրոջ կրսե.

— Տա՛ր ու բիր, քո մարդ օր դիկտ՝ րսե. «Մածուն շատ իմ լցի
մրջ ձձմին, կէնիմ-չէնիմ՝ չը հարվի»:

Մարդ դիկա, կրսե.

— Կնիկ, էդ ի՞նչ իս էրի, քու քուրն րսեք է, յորի՞ն չավտոր-
ցեր իս:

— Մա՛րդ, անխելքութեն իմ էրի, սաղ պուտուկ մե մածուն լցի
մրջ ձձմին, մկա չը հարվի, իմ քուրն րսեց, ես չավտորցա:

